ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱԶՎԱԴԵՊ ՀԱՆԴԻՊՈՂ, ՏԱՐՕՐԻՆԱԿ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.1-95

Հիմնաբառեր. *աղեփային զբոսաշրջություն, մռայլ զբոսաշրջություն, փոխպատվաստման զբոսաշրջություն, աերոզբոսաշրջություն, ալֆազբոսաշրջություն, ուսապարկով զբոսաշրջություն, սաֆարի զբոսաշրջություն*

Ինչպես գիտենք, զբոսաշրջությունը ենթադրում է բնակության վայրից դեպի մեկ այլ վայր այցելություն՝ հանգստի, ժամանցի, բուժման, կրթության և այլ նպատակներով: Բացի հայտնիներից և տարածվածներից, կան նաև զբոսաշրջության՝ առաջին հայացքից տարօրինակ թվացող, վտանգավոր կամ, պարզապես, քիչ հանդիպող տեսակներ: Հոդվածում ներկայացվել է զբոսաշրջության 30 տեսակ, ինչի շնորհիվ, կարծում ենք, մեծ չափով կարող է փոխվել ընթերցողի պատկերացումն այս ոլորտի մասին: Նոր զգացողություններ ունենալու և ինքնատիպ փորձառություն ստանալու համար շատ զբոսաշրջիկներ կարող են փորձել այստեղ նկարագրված անվտանգ տեսակները՝ միաժամանակ հեռու մնալով վտանգավորներից:

Ինչպես գիտենք, զբոսաշրջությունը ենթադրում է բնակության վայրից դեպի մեկ այլ վայր այցելություն՝ հանգստի, ժամանցի, բուժման, կրթության և այլ նպատակներով: Բացի հայտնիներից և տարածվածներից, կան նաև զբոսաշրջության՝ առաջին հայացքից տարօրինակ թվացող, վտանգավոր կամ, պարզապես, քիչ հանդիպող տեսակներ: Հոդվածում ներկայացվել է զբոսաշրջության 30 տեսակ, ինչի շնորհիվ, կարծում ենք, մեծ չափով կարող է փոխվել ընթերցողի պատկերացումն այս ոլորտի մասին: Նոր զգացողություններ ունենալու և ինքնատիպ փորձառություն ստանալու համար շատ զբոսաշրջիկներ կարող են փորձել այստեղ նկարագրված անվտանգ տեսակները՝ միաժամանակ հեռու մնալով վտանգավորներից:

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնում:

100-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ վեց մենագրության և երեք ուսումնական ձեռնարկների հեղինակ և համահեղինակ է:

ORCID - https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

Եթե ձեզ հարցնեն՝ զբոսաշրջության ինչ տեսակներ գիտեք, երևի թե, կսկսեք թվարկել. պատմամշակութային, գյուղական, արկածային, գաստրոնոմիական, կրոնական, բնապահպանական, սպորտային, առողջարանային, բժշկական, կրթական, գործնական և այլն:

Սակայն, պետք է նշել, որ բացի հայտնիներից և տարածվածներից, կան նաև զբոսաշրջության՝ առաջին հայացքից տարօրինակ թվացող, վտանգավոր կամ, պարզապես, քիչ հանդիպող տեսակներ, որոնցից մի քանիսին էլ անդրադարձել ենք այս հոդվածում: Այսպիսով՝ առանձնացրել ենք զբոսաշրջության հետևյալ տեսակները, որոնց մասին, գուցե, չեք էլ լսել.

1. Թմրամիջոցային զբոսաշրջություն *(Drug tourism)*. ենթադրում է ճանապարհորդություն դեպի այն վայրեր, որտեղ թմրանյութի օգտագործումն արգելված չէ կամ կարելի է դա հեշտորեն ձեռք բերել: Հիմնական ուղղություններն են համարվում Մեքսիկան, Լաոսը, Կոլորադոն (ԱՄՆ), Պերուն, Նիդեռլանդները, Ուրուգվայը, Չեխիան[1]:

2. Աղետային զբոսաշրջություն *(Disaster tourism)*. լայնորեն հայտնի է դարձել այն բանից հետո, երբ Կատրինա փոթորիկը հարվածեց Նոր Օռլեանին: Տեղացիներից ոմանք, փող աշխատելու նպատակով, ցանկացողների համար սկսեցին ավտոբուսներով շրջայցեր կազմակերպել դեպի այն վայրեր, որոնք լուրջ վնասներ էին կրել կամ նույնիսկ ամբողջովին ոչնչացել էին աղետի պատճառով:

3. Պատերազմային զբոսաշրջություն *(War tourism)*. այս դեպքում զբոսաշրջիկները ցանկանում են լինել ակտիվ պատերազմական գոտիներում՝ ռումբերի, փամփուշտների և նռնակների միջավայրում: Երբեմն ճանապարհորդությունը դեպի այն վայրեր է, որտեղ նախկինում են եղել պատերազմներ, երբեմն էլ՝ հենց ակտիվ գոտիներ: Հիմնական ուղղություններից են Բաղդադը, Դամասկոսը, Գազան, Քաբուլը, Եմենը, Լիբիան և այլն[2]:

4. Ատոմային զբոսաշրջություն *(Atomic tourism)*. առաջացել է 1990-ականների սկզբին, երբ առանձնակի հետաքրքրություն է դրսևորվել ատոմային դարաշրջանի նկատմամբ: Այս նպատակով գոյություն ունեն այցելության համապատասխան վայրեր: Հայտնի ուղղություններից են ուկրաինական Չեռնոբիլը, ճապոնական Հիրոսիման և Նագասակին, նաև մի շարք թանգարաններ[3]:

5. Շնաձկնային զբոսաշրջություն *(Shark tourism)*. նախընտրում են շնաձկներ սիրող զբոսաշրջիկները, որոնք փորձառու ջրասուզակների և պաշտպանիչ վանդակների օգնությամբ սուզվում են ջրի հատակը՝ զուտ այդ կենդանիներին տեսնելու նպատակով[4]: Զբոսաշրջության այս տեսակի համար համապատասխան վայրեր կան Կոստա Ռիկայում, Ֆիլիպիններում, Էկվադորում, Բահամյան կղզիներում, Կուբայում, Մեքսիկայում, Ֆիջիում և այլուր[5]:

6. Հակազբոսաշրջություն *(Contretourism)*. զբոսաշրջիկը դեմ է գնում զբոսաշրջության ընդունված մոտեցումներին: Նա ճանապարհորդում է հայտնի ուղղություններով, բայց հիմնական նպատակը ոչ թե տեղի ճանաչված տեսարժան վայրերը տեսնելն է, այլ դրանց շրջակայքն ուսումնասիրելը: Տեղ հասնելուն պես նա դեմքը շրջում է հայտնի տեսարժան վայրից և փոխարենը՝ լուսանկարվում դրա շրջակայքում: Օրինակ՝ կանգնելով Էյֆելյան աշտարակի դիմաց՝ զբոսաշրջիկն ուսումնասիրում է շրջակա պուրակները՝

[1] 7 Famous Drug Tourism Destinations In The World, https://travel.earth/drug-tourism-and-7-famous-drug-tourism-destinations/
[2] 10 War Tourism Destinations in the World for Your Adventure Tour, https://traveljee.com/world-travel/war-tourism-destinations/
[3] Welcome to Atomic Tourism, https://www.atomictourism.net/
[4] 25 Bizarre Types of Tourism You Might Want to Try, https://list25.com/25-bizarre-types-of-tourism-you-might-want-to-try/
[5] Shark Diving: The 13 Best Dive Sites in the World, https://blog.padi.com/2019/08/03/shark-diving-the-10-best-dive-sites-in-the-world/

առանց որևէ ուշադրություն դարձնելու աշտարակին:

7. Աերոզբոսաշրջություն *(Aerotourism).* ցանկանում եք ինչ-որ տեղ թռչել ինքնաթիռով, բայց չունեք կամ ժամանակ, կամ գումար, հետևաբար՝ աերոզբոսաշրջությունը լավ տարբերակ է ձեզ համար: Աերոզբոսաշրջիկները գնում են օդանավակայան, բայց ոչ թե իրականում ինքնաթիռ նստելու և որևէ վայր մեկնելու, այլ տեղի անցուդարձն ուսումնասիրելու նպատակով:

8. Գերեզմանային կամ մռայլ զբոսաշրջություն *(Tombstone or dark tourism).* զբոսաշրջիկները ճանապարհորդում են գերեզմաններ այցելելու նպատակով: Հայտնի վայրերից են Բուենոս Այրեսի Լա Ռեգոլետա (La Recoleta) և Փարիզի Պեր Լաշեզ (Pere Lachaise) գերեզմանատները:

9. Թոլքինի զբոսաշրջություն *(Tolkien Tourism).* առաջացել է «Մատանիների տիրակալը» գրքի և ֆիլմի երկրպագուների շնորհիվ, երբ վերջիններս սկսեցին ճանապարհորդել դեպի այն վայրեր, որտեղ տեղի էին ունեցել հայտնի ստեղծագործության իրադարձությունները: Հիմնական նպատակակետը Նոր Զելանդիան է, և զբոսաշրջության այս տեսակը մեծ եկամուտ է բերում երկրին: Թոլքինի զբոսաշրջության վայրեր կան նաև Հարավային Աֆրիկայի Բլյումֆոնտեյն քաղաքում, որտեղ ծնվել է գրող գրող Թոլքինը, ինչպես նաև Անգլիայի Օքսֆորդ քաղաքում, որտեղ նա դասավանդել է:

10. Ֆիլմերից հայտնի վայրերով զբոսաշրջություն *(SetJetting Tourism).* սա ենթադրում է այցելություններ դեպի այն վայրեր, որտեղ նկարահանվել են հայտնի ֆիլմեր, օրինակ՝ «Հարի Փոթերը»՝ Լոնդոն, «Գահերի խաղը»՝ Դուբրովնիկ և այլն:

11. Մանկատնային զբոսաշրջություն *(Orphanage tourism).* սովորաբար, նախընտրում են արևմտյան մեծահարուստները, որոնք այցելում են մանկատներ երրորդ աշխարհի երկրներում կամ անապահով տարածքներում: Նպատակը մանկատանը ներդրում կատարելն է, իսկ երբեմն էլ՝ երեխաներ որդեգրելը: Այս տեսակի զբոսաշրջության համար հանրաճանաչ ուղղություններ են համարվում Հընդկաստանը, Ուկրաինան և Հարավային Ամերիկան[6]:

12. Աղքատ թաղամասերով զբոսաշրջություն *(Slum tourism).* զբոսաշրջիկները, հետաքրքրությունից դրդված, այցելում են աղքատ երկրների չքավոր թաղամասեր՝ տեսնելու, թե մարդիկ ինչպես են ապրում նման պայմաններում: Հանրաճանաչ ուղղություններից են Մանիլան (Ֆիլիպիններ), Ռիո դե Ժանեյրոն (Բրազիլիա) և Մումբայը (Հնդկաստան):

13. Զենքի զբոսաշրջություն (Gun tourism). ենթադրում է զբոսաշրջային այցելություններ զենք ձեռք բերելու կամ, պարզապես, կրակելու նպատակով: Հավային և Լաս Վեգասը հայտնի ուղղություններից են: Օրինակ՝ Հավայի նահանգում զբոսաշրջիկները կարող են այցելել հրաձգարաններ և կրակել տարբեր զինատեսակներից[7]:

14. Քաղաքական զբոսաշրջություն *(Political tourism).* վերաբերում է քաղաքական նպատակներով իրականացվող ճանապարհորդություններին, իսկ ընտրվող ուղղությունները հակամարտության գոտիներն են: Ուղևորությունները միտված են հակամարտության հանգամանքներն ուսումնասիրելուն, երկու կողմի դիրքորոշումը հասկանալուն և, իհարկե, պատմական որոշակի գիտելիք ձեռք բերելուն: Քաղաքական զբոսաշրջության հանրաճանաչ ուղղություններից են Իսրայելը, Պաղեստինը և Աֆրիկան:

15. Սաֆարի զբոսաշրջություն *(Safari tourism).* ենթադրում է ճանապարհորդություն դեպի վայրի բնություն՝ վայրի կենդանիներին իրենց բնական միջավայրում դիտելու և լուսանկարելու համար: Աֆրիկյան մի քանի երկրներ հենց այս ուղղության շնորհիվ են ապահովում առավելագույն չափով եկամուտ: Աշխարհում սիրված սաֆարի ուղղություններն են Վիկտորիա ջրվեժը, Սերենգետի, Կրուգեր, Տարանգիրե ազգային պարկերը, Նգորոն-

[6] 15 Types of Tourism You've Never Heard of, https://medium.com/farewellalarms/unusual-and-strange-travel-styles-d2efd696df61

[7] 10 Unconventional Types of Tourism, https://listverse.com/2018/10/20/10-unconventional-types-of-tourism/

գորո խառնարանը և այլն[8]:

16. Ինքնասպանության զբոսաշրջություն *(Suicide tourism).* սա ճանապարհորդություն է ինքնասպանություն գործելու նպատակով: Որքան էլ տարօրինակ թվա, սակայն մարդիկ երբեմն նախընտրում են գնալ այլ երկրներ՝ ինքնասպան լինելու համար: Շվեյցարիայում նույնիսկ կան հատուկ ծառայություններ, որոնք օժանդակում են ինքնասպան լինել ցանկացողներին: Տվյալ դեպքում պետք է ունենալ անտանելի ցավեր, անբուժելի հիվանդություն, որոնցից ելնելով էլ՝ այդ ծառայությունները կտրամադրեն մահացու դեղեր[9]:

17. Փոխպատվաստման զբոսաշրջություն (Transplant tourism). ենթադրում է ճանապարհորդություն փոխպատվաստման նպատակով, երբ հիվանդը մեկնում է այլ երկիր՝ որևէ օրգան ձեռք բերելու համար: Ըստ որոշ գնահատականների՝ ամբողջ աշխարհում այսպես ապահովվում է օրգանների փոխպատվաստման 10%-ը[10]: 2019 թվականին աշխարհում կատարվել է 150000-ից ավելի օրգանի փոխպատվաստվում, որից 40621-ը՝ ԱՄՆ-ում[11]: Մի շարք երկրներում սա անօրինական է համարվում՝ դիտարկվելով որպես օրգանների վաճառք և թրաֆիքինգ: Հիմնականում աղքատ երկրներում մարդիկ փողի դիմաց վաճառում են իրենց օրգանները: Օրգանների թրաֆիքինգը ենթադրում է մարդկանց հավաքագրում, տեղափոխում, ապաստանի տրամադրում՝ սպառնալիքի, հարկադրանքի կամ խարդախության, խաբեության, առևանգման և այլ ձևերով, փոխպատվաստման նպատակով օրգանների հեռացման համար[12]: Ըստ հաշվարկների՝ մոտ 12000 անօրինական փոխպատվաստման արդյունքում աշխարհում տարեկան ապահովվում է շուրջ 1,5 միլիարդ ԱՄՆ դոլարի եկամուտ[13]: Օրգանների համաշխարհային սև շուկայում ամենաշատը վաճառվում է երիկամ, քանի որ մարդը կարող է ապրել նաև մեկ երիկամով, ուստի մյուսը վաճառում է՝ որոշակի գումարի դիմաց[14]:

18. Ջիհադական զբոսաշրջություն *(Jihad tourism).* այսպես են կոչվում արմատական իսլամիստական խմբավորումների ներկայացուցիչների ճանապարհորդությունները դեպի որոշ երկրներ, օրինակ՝ Պակիստան, Սոմալի, Սիրիա՝ մասնակցելու կառավարության դեմ իրականացվող մարտական գործողություններին[15]: Ջիհադ զբոսաշրջիկները նաև ներթափանցում են տարբեր եվրոպական երկրներ՝ ահաբեկչական գործողություններ կատարելու նպատակով:

19. Խաղատնային զբոսաշրջություն *(Casino tourism).* սա խաղամոլների ճանապարհորդությունն է տարբեր երկրներ՝ հայտնի խաղատներ այցելելու և խաղալու համար: Ճանաչված ուղղություններից են Լաս Վեգասը, Մոնտե Կառլոն, Մակաուն,

[8] 63 Types of Tourism in The World, https://colorwhistle.com/types-of-tourism/
[9] 'Suicide tourism' and understanding the Swiss model of the right to die, https://theconversation.com/suicide-tourism-and-understanding-the-swiss-model-of-the-right-to-die-96698
[10] Transplant tourism: A 'pervasive' and dangerous 'shadow world of medicine', https://www.healio.com/news/infectious-disease/20190416/transplant-tourism-a-pervasive-and-dangerous-shadow-world-of-medicine
[11] The most organ transplants in the world, https://www.comparethemarket.com.au/health-insurance/most-organ-transplants-in-the-world/
[12] Budiani-Saberi D. A., Delmonico F. L., Organ Trafficking and Transplant Tourism: A Commentary on the Global Realities, American Journal of Transplantation, 2008; 8: 925–929, http://cofs.org/home/wp-content/uploads/2012/06/Budiani_and_Delmonico-AJT_April_20081.pdf
[13] Gonzalez J., Garijo I., Sanchez A., Organ Trafficking and Migration: A Bibliometric Analysis of an Untold Story, Int J Environ Res Public Health. 2020 May; 17(9): 3204, https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7246946/
[14] Granzow, Marni E., "International Black-Market Organ Trade" (2017). Student Publications, https://cupola.gettysburg.edu/cgi/viewcontent.cgi?article=1660&context=student_scholarship
[15] Джихад-туризм: британские мусульмане сражаются против Башара Асада во время отпуска, https://russian.rt.com/article/5679

Նյու Ջերսին[16]:

20. Թույլատրելի կամ «հալալ» զբոսաշրջություն *(Halal tourism)*. վերաբերում է մահմեդականներին, քանի որ «halal» արաբերենից թարգմանաբար նշանակում է թույլատրելի՝ համաձայն իսլամական ուսմունքի: Ըստ այդմ՝ ճանապարհորդության ժամանակ պահպանվում են սննդակարգի, հագուստի, վարվելակարգի հիմնական կանոնները, այցերը կազմակերպվում են դեպի այն հյուրանոցներ, որտեղ չկան խոզի միս, ալկոհոլային խմիչքներ, մոլեխաղեր, լողավազաններ, նույնիսկ լողափերը տղամարդկանց և կանանց համար առանձնացված են և այլն: Հիմնական ուղղություններն են Մալայզիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Ինդոնեզիան, Թուրքիան[17]:

21. Ծննդաբերության զբոսաշրջություն *(Birth tourism)*. ենթադրում է ճանապարհորդություն դեպի մեկ այլ երկիր՝ ծննդաբերելու, ինչպես նաև նորածնի համար տվյալ երկրի քաղաքացիություն ապահովելու նպատակով: Հիմնական ուղղություններից են ԱՄՆ-ը, Կանադան, Մեքսիկան, Արգենտինան, Բրազիլիան և այլն[18]:

22. Ալֆազբոսաշրջություն *(Alphatourism)*. զբոսաշրջիկն այցելության երկրում քարտեզի վրա գտնում է այբբենական կարգով առաջին և վերջին փողոցները, դրանց միջև ուղիղ գիծ է քաշում կամ ցանկացած այլ պատկեր, ապա քայլում այդ վայրերի միջև գծված ճանապարհով[19]:

23. Փոփոխական զբոսաշրջություն *(Alternating Travel)*. զբոսաշրջիկը դուրս է գալիս հյուրանոցի դռնից, թեքվում դեպի աջ, հաջորդ խաչմերուկում՝ դեպի ձախ, այնուհետև՝ կրկին աջ, և այսպես շարունակ, մինչև որ չկարողանա շարունակել ճանապարհը որևէ խոչընդոտի պատճառով[20]:

24. Կույր զբոսաշրջություն *(Blindfolded tourism)*. զբոսաշրջիկը ճամփորդում է փակ աչքերով՝ ուղեկցորդի օգնությամբ, որպեսզի կարևոր կենսական զգայարանի՝ տեսողության բացակայության պայմաններում կարողանա խթանել մյուս զգայարանների (լսողություն, զգացում, հոտ) աշխատանքը՝ դրանց հիման վրա տպավորություններ ստանալով դեստինացիայից: Այս առումով, գոյություն ունի նաև «մութ ռեստորան» հայեցակարգը, երբ ռեստորանում լուսավորություն չկա, և այցելուները չեն տեսնում, թե ինչ են ուտում: «Կույր» զբոսաշրջությունը, որպես այդպիսին, առաջացել է 1970 թ.-ին, երբ զբոսաշրջիկներին առաջարկվում էր փակ աչքերով զգալ Լոնդոնի բույրը: Նման երթուղիներ այսօր ևս առաջարկվում են աշխարհի տարբեր վայրերում, որից հետո զբոսաշրջիկին է տրվում իր «կույր տուրի» տեսաձայնագրությունը[21]:

25. Մթնշաղից մինչև արշալույս ընկած ժամանակահատվածի զբոսաշրջություն *(Nyctalotourism)*. զբոսաշրջիկներն այցելում են հիմնական դեստինացիաները՝ մթնշաղից մինչև լուսաբաց ընկած ժամանակահատվածում:

26. Սագիտազբոսաշրջություն *(Sagittatourism)*. զբոսաշրջիկը նետ է գցում քարտեզի վրա՝ այդպես որոշելով այն դեստինացիան, որտեղ պետք է այցելի[22]:

27. Ջայլոզբոսաշրջություն *(Jailoo tourism)*. շրջագայություններ են կազմակերպվում դեպի դժվարամատչելի, քաղաքակրթությունից հեռու բնակեցված վայ-

[16] Travel Blog, https://www.mappingmegan.com/worlds-top-gambling-cities/
[17] How Halal Tourism is Reshaping the Global Tourism Industry, https://hospitalityinsights.ehl.edu/halal-tourism-global-industry
[18] 63 Types of Tourism in The World, https://colorwhistle.com/types-of-tourism/#tour-nine
[19] 15 Types of Tourism You've Never Heard of, https://farewellalarms.com/unusual-and-strange-travel-styles-d2efd696df61
[20] Experimental travel, https://zims-en.kiwix.campusafrica.gos.orange.com/wikipedia_en_all_nopic/A/Experimental_travel
[21] Blindfolded tourism, https://alchetron.com/Blindfolded-tourism
[22] Experimental Travel - The what's, why's and how's, https://www.holidify.com/pages/experimental-travel-1809.html

ներ, որտեղ բացակայում են էլեկտրականությունն ու բջջային կապը: Այսպիսով՝ քաղաքաբնակները հնարավորություն են ունենում ապրելու միջնադարյան կամ ավելի պարզունակ պայմաններում: Զբոսաշրջության այս տեսակը տարածված է Աֆրիկայում, Ամազոնի ջունգլիներում, Ասիայի լեռներում և տափաստաններում, Հյուսիսային Ամերիկայի անտառներում[23]:

28. Ուսապարկով զբոսաշրջություն *(Backpacker tourism).* ճամփորդելու ամենաէժան ձևերից է, երբ զբոսաշրջիկները տեղից տեղ են մեկնում ավտոբուսներով, գնացքներով կամ բյուջետային ավիաընկերությունների միջոցով՝ տոմսերը գնելով նախապես և զեղչով, ինչպես նաև գիշերում են երիտասարդական հոսթելներում կամ վրաններում: Նման ճամփորդությունները հիմնականում կազմակերպվում են խմբերով՝ ծախսերը կիսելու նպատակով: Ուսապարկերում տեղ են գտնում ճամփորդելուն անհրաժեշտ իրեր, այդ թվում՝ գիշերելու համար հարմար վրաններ, սնվելու գործընթացը կազմակերպվում է ոչ թե ռեստորաններում, այլ փողոցներում՝ խանութներից կամ սննդի տաղավարներից գնելով համապատասխան էժան ուտելիքներ կամ հենց իրենք են պատրաստում իրենց կերակուրը: Ճամփորդության ընթացքում այցելում են քաղաքային այգիներ, եկեղեցիներ, իսկ թանգարաններ գնում են այն օրերին, երբ մուտքն ազատ է[24]:

29. Հոգևոր զբոսաշրջություն *(Spiritual tourism).* սա կյանքի իմաստն ու նշանակությունը պարզելուն միտված ճամփորդություն է, որի ընթացքում վերելք են ապրում մարդու ֆիզիկական, մտավոր և զգայական էներգիաները, զարգանում, պահպանվում և բարելավվում են նրա մարմինը, միտքն ու հոգին[25]: Հոգևոր զբոսաշրջության նպատակը ոչ այնքան իրավիճակը, որքան ինքն իրեն փոխելն է: Սա ճգնավոր ճանապարհորդություն է նրանց համար, ովքեր ցանկանում են գտնել ներքին ներդաշնակություն և կարգի բերել մտքերը: Նման զբոսաշրջիկները մեկնում են մեղմ կլիմայով երկրներ, սովորաբար՝ Հնդկաստան, Թաիլանդ կամ Ինդոնեզիա՝ խաղաղ մթնոլորտում յոգայով և հոգևոր զարգացման վարժություններով զբաղվելու համար[26]:

30. Տիեզերական զբոսաշրջություն *(Space tourism).* համարվում է ճանապարհորդության ամենաթանկ տեսակը, քանի որ ենթադրում է ուղևորություն դեպի տիեզերք, Երկրի ուղեծիր կամ Միջազգային տիեզերական՝ զվարճանքի կամ գիտահետազոտական նպատակներով: Աշխարհի առաջին տիեզերական զբոսաշրջիկը եղել է ամերիկացի գործարար Դենիս Տիտոն՝ 2001 թ., ով 20 միլիոն ԱՄՆ դոլար է վճարել ռուսական Союз ТМ-32 տիեզերանավով թռիչքի և 7 օր Միջազգային տիեզերական կայանում անցկացնելու համար: Տիեզերական զբոսաշրջության գները տարբեր են: Օրինակ՝ Virgin Galactic-ի SpaceShipTwo-ով 2,5 ժամ տևողությամբ ենթաուղեծրային թռիչքի տոմսերը վաղուց արդեն վաճառված են ՝ 2-3 տարվա համար, իսկ թռիչքն արժե 250000 ԱՄՆ դոլար: Space Adventures-ն առաջարկում է թռիչք Լուսնի շուրջ, այց դեպի ՄՏԿ, ելք բաց տիեզերք, թռիչք հատուկ Boeing 727-200-ով, G-FORCE ONE™-ով: 7-14-օրյա տուրը ՄՏԿ-ում արժե 20-40 մլն ԱՄՆ դոլար, իսկ լրացուցիչ վճարելով 3-5 մլն ԱՄՆ դոլար՝ կարելի է նաև դուրս գալ բաց տիեզերք[27]:

[23] Top 6 weird types of tourism you might want to try, https://www.mylittleadventure.com/blog/top-6-weird-types-of-tourism-you-might-want-to-try

[24] 63 Backpacking Tips: Epic travel advice for Broke Backpackers, https://www.thebrokebackpacker.com/travel-tips/

[25] Spiritual Tourism: Tourists First, Tour Operators Second, And Destinations Third, https://worldfinancialreview.com/spiritual-tourism-tourists-first-tour-operators-second-and-destinations-third/

[27] Թովմասյան Գ., Տիեզերական զբոսաշրջություն. երբ երազանքները դառնում են իրականություն, https://asue.am/amberd/publications/-space-tourism-when-dreams-come-true

Այսպիսով՝ զբոսաշրջությունը բազմատեսակ է և կարող է նոր փորձառություն և զգացողություններ պարգևել զբոսաշրջիկներին, ուստի, արկածների սիրահարները, որոնք հոգնել են միապաղաղ ու միօրինակ տուրերից, կարող են փորձարկել նոր առաջարկները, իհարկե, խուսափելով վտանգավոր և ռիսկային ուղևորություններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Գ., Տիեզերական զբոսաշրջություն. երբ երազանքները դառնում են իրականություն, https://asue.am/amberd/publications/-space-tourism-when-dreams-come-true
2. Джихад-туризм: британские мусульмане сражаются против Башара Асада во время отпуска, https://russian.rt.com/article/5679
3. Blindfolded tourism, https://alchetron.com/Blindfolded-tourism
4. Budiani-Saberi D. A., Delmonico F. L., Organ Trafficking and Transplant Tourism: A Commentary on the Global Realities, American Journal of Transplantation, 2008; 8: 925–929, http://cofs.org/home/wp-content/uploads/2012/06/Budiani_and_Delmonico-AJT_April_20081.pdf
5. Experimental travel, https://zims-en.kiwix.campusafrica.gos.orange.com/wikipedia_en_all_nopic/A/Experimental_travel
6. Experimental Travel - The what's, why's and how's, https://www.holidify.com/pages/experimental-travel-1809.html
7. Gonzalez J., Garijo I., Sanchez A. Organ Trafficking and Migration: A Bibliometric Analysis of an Untold Story, Int J Environ Res Public Health. 2020 May; 17(9): 3204, https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7246946/
8. Granzow M. E., "International Black-Market Organ Trade" (2017). Student Publications, https://cupola.gettysburg.edu/cgi/viewcontent.cgi?article=1660&context=student_scholarship
9. How Halal Tourism is Reshaping the Global Tourism Industry, https://hospitalityinsights.ehl.edu/halal-tourism-global-industry
10. Shark Diving: The 13 Best Dive Sites in the World, https://blog.padi.com/2019/08/03/shark-diving-the-10-best-dive-sites-in-the-world/
11. Spiritual Tourism: Tourists First, Tour Operators Second, And Destinations Third, https://worldfinancialreview.com/spiritual-tourism-tourists-first-tour-operators-second-and-destinations-third/
12. 'Suicide tourism' and understanding the Swiss model of the right to die, https://theconversation.com/suicide-tourism-and-understanding-the-swiss-model-of-the-right-to-die-96698
13. The most organ transplants in the world, https://www.comparethemarket.com.au/health-insurance/most-organ-transplants-in-the-world/
14. Transplant tourism: A 'pervasive' and dangerous 'shadow world of medicine' https://www.healio.com/news/infectious-disease/20190416/transplant-tourism-a-pervasive-and-dangerous-shadow-world-of-medicine
15. Travel Blog, https://www.mappingmegan.com/worlds-top-gambling-cities/
16. Top 6 weird types of tourism you might want to try, https://www.mylittleadventure.com/blog/top-6-weird-types-of-tourism-you-might-want-to-try
17. Welcome to Atomic Tourism, https://www.atomictourism.net/
18. 25 Bizarre Types Of Tourism You Might Want To Try, https://list25.com/25-bizarre-types-of-tourism-you-might-want-to-try/
19. 63 Backpacking Tips: Epic travel advice for Broke Backpackers, https://www.thebrokebackpacker.com/travel-tips/
20. 7 Famous Drug Tourism Destinations in the World, https://travel.earth/drug-tourism-and-7-famous-drug-tourism-destinations/
21. 15 Types of Tourism You've Never Heard of, https://medium.com/farewellalarms/unusual-and-strange-travel-styles-d2efd696df61
22. 63 Types of Tourism in The World, https://colorwhistle.com/types-of-tourism/
23. 10 Unconventional Types Of Tourism, https://listverse.com/2018/10/20/10-unconventional-types-of-tourism/
24. 12 unusual types of tourism, https://farmguests.com/diary/12-unusual-types-of-tourism/
25. 10 War Tourism Destinations in the World for Your Adventure Tour, https://traveljee.com/world-travel/war-tourism-destinations/

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

А ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...?

РЕДКИЕ, СТРАННЫЕ И ОПАСНЫЕ ВИДЫ ТУРИЗМА

Как известно, туризм подразумевает переезд с места жительства в другое место для отдыха, развлечений, лечения, учебы и других целей. Помимо общеизвестных и популярных видов туризма, существует ряд видов, которые на первый взгляд могут показаться странными, опасными или просто редкими. В этой статье представлено 30 таких видов, которые могут сильно изменить представление читателя о туризме. Чтобы получить новые ощущения и впечатления, многие туристы могут попробовать представленные здесь безопасные виды, при этом оставаясь в стороне от опасных видов туризма.

Ключевые слова: *туризм стихийных бедствий, темный туризм, трансплантационный туризм, аэротуризм, альфатуризм, бэкпекинг туризм, сафари туризм*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics

DO YOU KNOW THAT...?

RARE, STRANGE AND DANGEROUS TYPES OF TOURISM

As we know, tourism implies visiting a place other than the place of one's residence for leisure, entertainment, treatment, education and other purposes. In addition to the well-known and popular types of tourism, there is a number of types that, at first glance, may seem strange, dangerous, or just rare. In this paper, 30 types of tourism that can greatly change the reader's perception of tourism are presented. To get new sensations and experiences, many tourists may try the safe types presented here, at the same time staying away from dangerous types of tourism.

Keywords: *disaster tourism, dark tourism, transplant tourism, aerotourism, alphatourism, backpacker tourism, safari tourism*